ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IECC-F408-4EF8-865E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/5213/02/26

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.05.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Գարանտ Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետնաև՝ Հայցվոր) ընդդեմ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

–

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 13.05.2026թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/5213/02/26 քաղաքացիական գործը, որը **մակագրվել է**Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորՍ Երիցյանին **13.05.2026 թվականին,ժամը 21:30 րոպեին,** իսկ հասանելի է դարձել **14.05.2026 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է,որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումըմերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվողբոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմիցորոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելուվերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկաապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատմանպատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվումեն էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարությանմասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմիցիրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք,պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում

և **<u>ներկայացվում են Համակարգի միջոցով</u>**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվողպահանջներին համապատասխան, **<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմողտեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցներըներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելուև **<u>Համակարգով ուղարկելու միջոցով</u>**:

Վերոգրյալի հաշվի առնմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «ԵրևանիՋերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից պետք է պահանջել «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-26/13» ծածկագրով գնմանգործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմողտեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Գարանտ Մոթորս» ՍՊԸ-ի ընդդեմ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի՝ գնումներիգործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելումասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-26/13» ծածկագրով գնման գործընթացի հետ կապվածիր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումըպատասխանող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույնորոշումը ստանալուց հետո՝ **<u>հնգօրյա ժամկետում</u>**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2026.05.18 16:44:30 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am